

## ՀԱՇՎ ԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արարս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2012թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հարգելի համայնքի բնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվե՛ք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արարս համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2012թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած հատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:

Արարսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տնդական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, բնակչությունը 2048 մարդ, մոտ 1302 ընտրող, 1200 հա հողատարածություն: 2012 թվականին մշակվել է շուրջ 65 հա հողատարածքներ, անցյալ տարվա համեմատությամբ 180 հա պակաս: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

### Ըստ բնագավառների կատարվել են

#### Ֆինանսական բնագավառում

Կազմակերպվել է և շարունակվում է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները, և անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ այսօր նկատելի տեղաշարժ կա դրական առումով:

#### Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարված աշխատանքների բնագավառում

Կազմակերպվել է վոլեյբոլի մրցումներ հարևան համայնքների հետ: Կազմակերպվել են սպորտային միջոցառումներ կոնտակտ-կարատե մարզածևից:

#### Պաշտպանության բնագավառում

Կազմակերպվել է զինապարտների հաշվառման նրանց բուժզննման աշխատանքները: Ուժեղացվել է կապը զինկոմի հետ և զորահավաքի կազմակերպման աշխատանքները:

#### Սոցիալական ծառայության բնագավառում

Աջակցություն է ցուցաբերվել անապահով ընտանիքներին: Թվով 27 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն ընդհանուր 1,300 հազար դրամի չափով:

#### Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել է գորննի և կորեկի բերրահավաքի աշխատանքները և նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկվել աշնանացանք ժամանակին և պատշաճ կազմակերպելու ուղղությամբ:

Նամայնրի հիմնախնդիրներ

Նամայնրի հիմնախնդիրները, այսօր էլ մնում են

1. Նամայնրի գազափիկացումը,
2. Ոռոգման ջրի անբավարարությունը,
3. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
4. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:

( Արարս համայնրի ղեկավար )



/ Ա. Միրանյան